

վէրքին. սկսան բամբասել առաջնորդն եւ  
զրգուել նուիրակը անոր դէմ :

Իսկ նրվիրակն եղկելին

Հաւանեցաւ խօսաց նոցին .

Չասել աղօթք առջեւ խորնին :

Նուիրակին այս յանկարծական փոփոխու-  
թիւնը զայրացուց եպիսկոպոսը. որ նաեւ այս  
անգամ փորձուած հնարադիտութիւնը բանե-  
ցուց. զնաց կառավարութեան եւ ամբաստա-  
նեց նուիրակը, թէ Կ. Պոլսէն եկած է լրտե-  
սելու ի նպաստ թուրքին : Այս ամբաստանու-  
թեան առջեւ մեծ կաշառքով միայն կրցաւ  
արդարացնել ինք զինքը Խաչատուր : Երբ  
երեւան ելաւ թէ Նիկոլն է վարդապետը մատ-  
նողը, զրգուեալ ամբօխը դիմեց նուիրակին  
եւ գրով պահանջեց թէ անյապաղ «ա՛ռ զկարդ  
Նիկօլին» . եւ թէ պատրաստ ենք մենք դրա-  
մական ուժով «հաւասար գետնին» ընել զա-  
նիկա : Խաչատուր քաջալերուեցաւ : Իսկ Նի-  
կոլ պահեց ինք զինքը ժողովրդեան դայրոյ-  
թին առջեւ .

Երբ պարոնտէրըն զայն լուաւ

Բնաւ այլ ժամըն չըմբտաւ :

Վախեց ու ի խոնքըն արդելաւ ,

Տասնուչորս չարաթ ի դուրս չելաւ :

Չուր տեղ կը դիմէր Նիկոլ այս առանձ-  
նութենէս նուիրակին՝ հայցելու միջնորդու-  
թեամբ իւր ազգականներու ներողամտու-  
թիւն. «Թէ թող զյանցանս իմ չարաչար» .